



ՍՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՊՈՍՏՈՂՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ ԸՆԴՍԵՐ



ՏՕՒ ՊԱՅԾԱՆԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

24 ՅՈՒՆԻՍ 2022

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 4

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ

(7.25-8.4)

Ի մաստուլթիւնը Աստուծոյ
գօրուլթեան ճաճանչն է,
ամենակալին փառքին
ճշմարիտ ծագումը.
ուստի ո՛չ մէկ պիղծ
բան կը խառնուի անոր
մէջ: Մշտնջենաւոր
լոյսին նշոյլն է
անիկա, Աստուծոյ
ն երգործութեան
անարատ հայելին եւ

անոր բարերարութեան պատկերը:

Մէկ է անիկա եւ ամենակարող,
ինքնակայ է եւ բոլորը նորոգող:
Բոլոր ժամանակներուն ալ մաքուր
հոգիներուն մէջ կը բնակի եւ զանոնք
Աստուծոյ բարեկամ ու մարգարէ կը
ղարձնէ, որովհետեւ Աստուած կը սիրէ
միայն ան՝ որ իմաստութեամբ կ'ապրի:

Իմաստութիւնը աւելի գեղեցիկ է
քան արեւը, գերիվեր է քան բոլոր
համաստեղութիւնները: Լոյսին հետ
համեմատած՝ գերազանց է անիկա,

որովհետեւ մինչ գիշերը փոխն ի փոխ
լոյսին տեղը կ'առնէ, չարը չի կրնար
յաղթել իմաստութեան:

Անիկա աշխարհի մէկ ծայրէն միւսը
կը սփռէ իր օգուտները եւ իր բարե-
րարութեամբ կը խնամէ բոլորը: Երիտա-
սարդութեանս օրերէն իսկ սիրեցի ու
փնտռեցի զայն, ուզեցի զայն ինծի
հարս ունենալ, անոր գեղեցկութեան
ցանկացի: Անիկա իր ազնուական
ծագումը կը փառաւորէ, որովհետեւ
Աստուծոյ կեանքին հաղորդակից է եւ
տիեզերքի Տէրը սիրեց զայն: Արդարեւ
անիկա խորհրդակից է Աստուծոյ
իմաստութեան եւ իր ընտրութեամբ
մասնակից է անոր գործերուն:

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(14.16-21)

Այն ատեն, Երուսաղէմի վրայ
արշաւած բոլոր ազգերու
մնացորդները տարուէ տարի
Երուսաղէմ պիտի գան երկրպագելու
թագաւորին, ամենակալ Տէր Աստուծոյ,
եւ Տաղաւարահարաց տօնը կատարելու:
Այն ժողովուրդը որ մերժէ Երուսաղէմ
գալ երկրպագելու Թագաւորին
ամենակալ Տէր Աստուծոյ, անիկա
անձրեւ պիտի չունենայ իր երկրին
վրայ:

Եթէ Եգիպտոսի ժողովուրդը չելլէ ու չգայ, պիտի ենթարկուի նոյն հարուածին որով Տէրը պիտի պատուհասէ այն ժողովուրդները որոնք Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն գար:

Եւ Պատուհասը որ եգիպտացիներուն վրայ պիտի գայ՝ պիտի գայ նաեւ բոլոր այն ժողովուրդներուն վրայ որոնք Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն գար: Այն օրը նոյնիսկ ձիերու սանձին վրայ գրուած պիտի ըլլայ. «Տիրոջ համար սրբագործուած»։ Աստուծոյ տան կաթսաներն իսկ սուրբ պիտի համարուին գոհասեղանին վրայ դրուած տաշտերուն նման, ու Երուսաղէմի եւ Հրէաստանի մէջ գտնուող ամէն կաթսայ ամենակալ Տիրոջ անունով նուիրագործուած պիտի ըլլայ. այնպէս որ բոլոր անոնք որ գոհ մատուցանելու կու գան՝ պիտի առնեն գանոնք եւ անոնց մէջ եփեն իրենց մատաղը: Եւ այն օրը Աստուծոյ տան մէջ ոեւէ վաճառորդ պիտի չգտնուի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ՆԱՄԱԿԷՆ
(1.1-7)

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Ան նոյ-

Ան նոյնիսկ կեանքն էր, որ յայտնուեցաւ:

նինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մա-սին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան, որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք “հաղորդակից ենք իրեն” եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քալենք, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ’ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(16.13-17.13)

Երբ Յիսուս Փիլիպպոսի կառուցած կեսարիայի կողմերը եկաւ, իր աշակերտներուն հարցուց. «Մարդիկ ի՞նչ կ’ըսեն մարդու Որդիին մասին. ո՞վ եմ ես»: Անոնք պատասխանեցին.

«Ոմանք քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք Եղիա մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»:

ԴՈՒՆ ՔՐԻՍՏՈՍՆ ԵՍ ԿԵՆՈՒԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐՂԻՆ:

Յիսուս հարցուց անոնց. «Իսկ դո՛ւք ով կը կարծէք զիս»:
Սիմոն Պետրոս պատասխանեց.
«Դուն Քրիստոսն

ես կենդանի Աստուծոյ Որդին»:
Յիսուս ըսաւ անոր. «Երանի՛ր քեզի Սիմոն, Յովնանի որդի, որովհետեւ ատիկա քեզի յայտնողը մարդ մը չէր, այլ իմ Հայրս որ երկինքի մէջ է: Քեզ “Պետրոս”, այսինքն ժայռ կոչեցի, եւ այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, զոր մահն իսկ պիտի չկարենայ յաղթահարել: Քեզի պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ կապես երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ»:
Ապա Յիսուս խստիւ պատուիրեց իր աշակերտներուն, որ ոե՛է մէկուն չըսեն թէ ինքն է Քրիստոսը:

Այս դէպքէն ետք, Յիսուս սկսաւ յայտնել իր աշակերտներուն, թէ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ, ուր շատ պիտի չարչարուի քահանայապետներէն, Օրէնքի ուսուցիչներէն եւ երէցներէն. զինք նոյնիսկ պիտի սպաննեն եւ սակայն ինք երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:

Ասոր վրայ Պետրոս զինք մէկ կողմ տարաւ եւ սկսաւ հակառակելով վիճիլ. «Քաւ լիցի, Տէ՛ր, այդպիսի բան թող չպատահի քեզի»:
Յիսուս Պետրոսի դառնալով ըսաւ. «Ետիս գնա, սատանա՛յ, դուն արգելք ես ինծի, որովհետեւ Աստուծոյ ծրագիրը չէ որ կը խորհիս, այլ մարդոց մտահոգութիւնը կ'արտայայտես»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինծի համար կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ոե՛է բանով չի կրնար իր կեանքը ետ առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին իրեն գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր

դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան: Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՛նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի Որդիս որ հաւնեցայ. անոր մտիկ ըրէք»:

Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար՝ երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ գատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով. «Մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ»: Յիսուս պատասխանեց. «Ճի՛շդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամէն ինչ. բայց զիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան:

Ոտքի՛
ելէք, մի՛
վախնաք»:

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք
ԵԿԵՂԵՑԻՈՅԱ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՈ
ԵՒ
ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ
յԱՅՏԵԾԷՔ (like).

[www.facebook.com/
SourPhagopChurch-
Montreal](http://www.facebook.com/SourPhagopChurch-Montreal)

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք ԱՁԵՒ
Ս. ՅԱԿՈՔ
ԱՌԱՋՆՈՐՊԱՆԱՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԱՅՔԷՁՈ՛
www.sourphagop.net

ԹԵՐԹԻԿԻ ԱՆՆՈՐՊ ԹԻԲԵՐՈ
ԿՐԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.net
ԿԱՅՔԷՁԻՆ ԿՐԱՅ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈ
ԱՆՏՈՐՕՔ ԿԱՏԱՐԵԾԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ: